

19. ԿԸՆԼԵՇԱՆ

Կիլնը մեկ մարթ: Դիմքյն ը, ուր կնիկ, անու տըղա չկա:

Կըսը. – Իս տ'իլնիմ, էրթամ մա մալեն, ծի թուխթըմ տամ անիլ:

Կիլնը, կերթա մա մալեն, մալեն թուխթ կանը անու:

Կըսը. – Գյընա՛, ոսպընե վըռիկ իփի՛, կի՛, օր իլնիս տըղով:

Կիլնը տըղով: Աստծու խրամանքիվ քանը ոսպա՛մ խատ կիրիր էր, անցկում տըղա էլավ:

Ա.Ա էլ կը պիրը, կըսը. – Նա հըմեն տըղա իս ի՞նչ տ'անիմ: Ի՞նչըն տը շախիմ:

Զախսավիլ կը տա, խա ցանին կը տա թհներ:

Կըսը. – Երանիկ էլներ, իս մեկ թըղեր էր, ուր խոր խամար խաց տաներ:

Կըսը. – Մարե՛, չէ՞ իս գի թհներ վե իմ, իս Կըղլեշան իմ:

Թհներ կաչկը, դիւր կաչկը, չըկերի Կըղլեշան իլնը տիւս: Մուխսիր կը խանը, խա մուխսիր կիլնը տիւս:

Կըսը. – Տըղա՛, խալեն խաց պիրիմ, ա՞ռ էշ, գյընա՛, տա՛ր քիւ խոր:

Կիլնը, խաց կը թալը վար իշուն, կը մըտնը իշու ականջ վե, կերթա:

Մեկ մարթըմ ան կընարեն կը գա, կը տեսնա՛ էշըմ բառադա կը գա:

Կըսը. – Վոլա՛, գի ծի էշը:

Կըղլեշան կըսը. – Կըլի՛րս, ապա իս էստեղ ի՞նչ կանիմ, անտեր էշ հիւրդի՞ւց ը:

Խաց կը տանը խոր: Խեր վար կանը:

Խեր կիրիշկը, կըսը. – Ապա նա էշ բառադա ի՞նչըլս իրը ըստա:

Կըղլեշան կըսը. – Կակո՛, չէ՞ իս գի ըստա յիմ:

Ա.Ա էլ կըսը. – Տըղա՛, խրիտ կայնը, մաշ առտին չըկորսիս:

Ա.Ա էլ կերթա, իզ կը կույզ վերեն, Կըղլեշան կը մնա տակ: Մարթ կինի դարբար՝ հա՛յ լաճ, հա՛յ լաճ, լաճ չըկա: Ապա դի՛ւր տը կընդնը:

Մարթ կը գա տուն:

Կըսը. – Մա՛րթ, իո՞ւր ի քիւ լաճ:

Կըսը. – Վոլա՛, իմ լաճ կորսավ մաշ առտին:

Կըլան:

Պառավըմ ան կընարեն կըսը. – Տհւ վըրե՞ կը լեթ:

Կըսին. – Վոլա՛, մի Կըղլեշան կորսեր ի, են հապով կը լանք:

Պառավ կիլնը, կը գա մաշ առտին, ուր խամար ցան կը ժիղ-վը: Ինչ ծեռ կը տա, ցան կը վիրուցը, Կըղլեշան գի կույզ տակ:

Պառավն էլ ուրախութնե կը ծըռը, Կըղլեշան կը տընը մաշ ցախիրուն, կը տա իընթըտակ:

Պառավ կը գա գյիտու պերան, ուր գյիրկ կը տընը գյետին, Կըղլեշան գաղտիկ կը փախը, կիյա, իլնը թըզը ծառ վե:

Կը գա, կը տեսնա՛ գի Կըղլեշան իլիր թըզը ծառ վե:

Կըսի. – Կըղլեշան, թուզըմ տո՛ւ իս ուտիմ, իս պառավ իմ:

Կըղլեշան թուզըմ կը թալը, կըսը. – Ա՛ռ, կի՛:

Կըսը. – Կըղլեշան, ան թուզ կորսավ, ցածրացի՛, տու իմ ծեռ, իմ ծեռ չըխասնը:

Ա.Ա էլ կըսը. – Խա՛, իս ցածրանամ, օր տիւ ըզձը տանիս, ուտիս:

Կըսը. – Կըղլեշան, քիւ Աստծու բախտ, ցածրացի՛, թուզըմ տո՛ւ իմ ծեռ, իս ուտիմ:

Ա.Ա էլ կը ցածրանա, համա կը թալը, Կըղլեշան կը պըռնը: Կը տընը մաշ ուր կիղվին, կիջ կը կապը, կառնը, կը տանը:

Խեր, մեր կը գան, կըսին. – Մի Կըղլեշան կընդա՞ր, պառավ:

Ա.Ա էլ կըսը. – Կընդիր իմ, գի ցախը կիղով վե:

Կըղլեշան ուր հախուն կը մըտնը մաշ կառը փըշերուն վե: Կան կը գան, չըն կընդնը:

Ցախ կը տանին տուն, կը տան թհներ վե, կըսին. – Ա՛խ, ա՛խ, միր լաճ հի՞ւր կորսավ:

Կըղլեշան կը մտնը ակ վե, կըսը. – Կակո՛, վոլա՛, իս գտ
ըստան իմ:

Թհրվան ակնեն կը խանին ըգկըղլեշան:

Պառավ կը փէշմընի, կըսը. – Խոզկեն իս գկըղլեշան կերեր
էր, վըրե՞ տարա, տըվը անու խէր, մհր:

Լած կիլնը, կերթա տէւս, պառավ կը լարը հիտիվ: Ան էլ
զինքյ կը թալը ճաչ հառվին, պառավ կը խասնը, կը խանը տէւս,
կուտը:

Խեր, մերն էլ հիտիվ Կըղլեշանին կան կը գան, վոլա՛, չըկա:
Ապա պառավ կիրիր:

Կըսը. – Մի կան գալ հիտիվ Կըղլեշանին ի՞նչ ուբուտ ը,
Աստված տըվից, Աստված առից:

Կնիկ կըսը. – Գյընա՛, առտ վարը, թալքը Աստված կամենա,
ակոսը մեչ տեղըն իլնը հերեվան:

Կիլնը, կերթա, առտ կը վարը, գիւգիւմըն ոսկը կը կընդնը:

Ան էլ կըսը. – Վոլա՛, ալ իս վար չըմ անի, թանի ժիր ինքյ,
ուտինքյ նա ոսկըն, մի թան ը:

Կը տեսնա՝ մեկ մարթ ան կընարեն կը գա:

Կըսը. – Վոլա՛, իս տը կիսիմ նա ոսկըն խա նա մարթուն:

Կը կանչը, կը աիրը, կես կը տա անու, կես կը տանը ուր
տուն:

Կը խասնը ուր մըրազ, տէւ էլ՝ քիւ մըրազ:

